27.273

05 JAN 2010

ԴԵՊՈՒԼԵՑԱ ՏԱՍՈՒՓԼՈՒ ՏԱԲԱՐՈՒԵՑԻՆ ՏԱԳԻՈՒՆՋԵՏՈՒ ՈՒՓԼԵՑԱԿԱՆ ՊԵՏԱՏԵՍ.
Խ.Ֆ. ՏՏՀ Տանալտեռ Կոմիսարտաց Խորհրդոց և Էկոնոմիական Խորհրդոց Գործերի Կառավարության.

Институт Истории Академии Наук СССР

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

[Հաստատված է Համավրացական կենտրոնական գործադիր կոմիտեյի յեվ Վրաստանի ՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1934 թ. հունվարի 8-ի վորոշումով (Վ.ՍԽՀ Ն. Ժ. 1934 թ. № 3, հոդ. 47)]:

1. ԱՍՖԽՀ 1926 թ. ոգոստոսի 9-ի տեղական ֆինանսների մասին կանոնադրության հիման վրա (ԱՍՖԽՀ Ն. Ժ. 1926 թ. № 2, հոդ. 697) յուրաքանչյուր գյուղական խորհրդում կազմվում է ի կատար է ածվում ինքնուրույն գյուղական բյուջե տնտեսական պլանի համաձայն, վոր ընդունել է ռայոնական գործադիր կոմիտեն։

2. Տեղական միջոցների ամեն մի ծախսում թույլ է տրվում միայն այն դեպքում, յերբ համապատասխան վարկը նախատեսված է տարեկան բյուջեյով կամ լրացուցիչ նախահաշվով։

3. Թե յեկամտային աղբյուրները, թե ծախսերի առարկաները պիտի վերապահվեն գյուղական բյուջեներին բոլոր այն կարիքների հաշվառման հիման վրա, վորոնք բացառիկ կամ առավելագույն նշանակություն ունին գյուղական խորհրդի կամ նրա առանձին մասերի համար։

4. Յեկամտային աղբյուրների և ծախքերի առարկաների բաշխումը առանձին աստիճանների բյուջեների մեջ պետք է կատարվի Վրաստանի ՍԽՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշման հիման վրա, վորը սահմանում է գյուղական բյուջեներին տրվելիք ծախքերի պարտադիր մինիմալ թվարկը։ Ռայոնական գործադիր կոմիտեները կարող են ընդլայնել գյուղական բյուջեներին տրվելիք սույն թվարկը, համապատասխանորեն ավելացնելով յեկամտային աղբյուրները։

5. Գյուղական բյուջեներին վերապահվում են հետևյալ ծախքերը, վորոնք գործադրվում են այն ձեռնարկություններ և հիմնարկություններ հիման վրա, կամ ծառայում են այն ձեռնարկումներին, վորոնք սպասարկում են բացառապես կամ առավելապես գյուղական խորհրդի տերիտորիան՝

ա) գյուղական խորհուրդների պահպանության համար։

բ) կոմունալ գույքերի և ձեռնարկությունների պահպանության համար։

գ) գյուղական բարեկարգության և հրդեհընդդեմ պահպանության համար։

դ) գյուղական հիմնարկությունների և ձեռնարկությունների և տնտեսության՝ այգիների, բանջարանոցների, վարձու, բեղմնավորման կետերի և

336.12
4-21

փորձնական դաշտերի կազմակերպության, սարքավորման և պահպանության համար, գյուղատնտեսական մեքենաների նորոգման համար.

յե) հողային և այլ գույքեր շահագործելու և պահելու համար.

զ) տեղական նշանակություն ունեցող անտառները պահպանելու և շինելու համար.

է) գյուղական խորհրդի և հողային ընկերությունների տնօրինության տակ գտնվող արդյունաբերական և այլ ձեռնարկությունները շահագործելու համար.

ը) տնտեսական հաշվարկով գործող համապատասխան ձեռնարկություններին ֆինանսավորելու համար.

թ) գյուղական նշանակություն ունեցող ճանապարհներ, կամուրջներ, գետանցքներ և այլ ճանապարհային կառուցումներ կառուցելու և պահպանելու համար, նույնպես գյուղական կապի համար.

ժ) ժողովրդական լուսավորության հիմնարկներ՝ դպրոցներ, գրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ, անգրագիտության վերացման կետեր, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներ կազմակերպելու, սարքավորելու և պահելու համար.

ժա) բժշկական և բուժական կետեր, մանկաբարձական ոլորտ, մանկական մսուրներ և կոնսուլտացիաներ կազմակերպելու, սարքավորելու և պահելու համար, նույնպես սանիտարա-առողջապահական ձեռնարկումների համար.

ժբ) ինվալիդներին խնամելու և կանանց կենցաղը բարելավելու համար.

ժգ) փոխառություններ և նրանց տոկոսները վճարելու համար.

ժդ) գյուղական բյուջեից աշխատավարձ ստացողներից սոցիալական ապահովության մասնահանումների համար.

6. Գյուղական բյուջեին վերագրված ծախքերը ծածկելու համար գյուղական խորհուրդներին վերապահվում են հետևյալ յեկամտային աղբյուրները՝

ա) ավյալ գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող և նրա տերրիտորիայի համար բացառապես կամ գլխավորապես տնտեսական նշանակություն ունեցող գույքից և տեղական ձեռնարկություններից.

բ) գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող քաղաքացիացրած տներից և առևտրա-արդյունաբերական շենքերից.

գ) կոմունալ, արդյունաբերական և այլ ձեռնարկումներից և միջոցառումներից.

դ) հողերից (վարելահող, մարգագետիններ, այգիներ, բանջարանոցներ և այլն), շուկային հրապարակներից և այլ տեղերից, վոր տրվում են առևտրի համար, փոխադրությունից, ձկնորսությունից, ընդհանուր տարածված հանածոներից (ավազ, քար, կավ և այլն) և այլ յեկամուտներից.

Ua848
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

յե) ավյալ գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող հողի ռենտից.

զ) գյուղական նշանակություն ունեցող անտառներից և նրանց կողմնակի ոգտագործելուց.

է) ավյալ գյուղխորհրդի տերրիտորիայի վրա գտնվող արդյունաբերը զբաղման հարկից՝ 100 տոկոսաչափ.

ը) ավյալ գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող գյուղատնտեսական հարկի յեկամուտներից ստացվող մասնահանումներից այն չափով, վոր սահմանում է Վրաստանի ՍԽՀ գյուղատնտեսական հարկի մասին որենքով.

թ) ֆիզիկական անձերից գտնվող յեկամտային հարկ այն չափով, վոր սահմանում է ռայոնական գործադիր կոմիտեն, բայց վոչ պակաս քան այս հարկի յեկամուտների ընդհանուր գումարի 25%.

ժ) 100% այն յեկամուտներից, վոր ստացվում են այն անձերից, վորոնք չեն մասնակցում աշխատանքային և ճանապարհային պարհակին. այս պարհակի փոխարեն այն ճանապարհների վերաբերյալ, վոր կառավարում է գյուղական խորհուրդը և ֆինանսավորվում է գյուղխորհրդի բյուջեյից.

ժա) գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող միասնական պետական տուրք՝ 100% չափով.

ժբ) 100% տեղական հարկ և տուրք, վոր սահմանվում է Վրաստանի ՍԽՀ որենդրությունով և հավաքվում է գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա.

ժգ) 100%-ի տուրք այն անձերից, վոր զրկված են գյուղական կատարածու լինելու իրավունքից.

ժդ) 100% շենքահարկ.

ժյե) ինքնահարկման միջոցները բացի այն մասից, վոր դարձնվում է միջգյուղային նշանակություն ունեցող ձեռնարկումների վրա.

ժզ) կուլտհարկ այն չափով, վոր սահմանում է ռայոնական գործադիր կոմիտեն, բայց վոչ պակաս քան 20% այս տուրքի յեկամուտներից.

ժէ) մասսայական փոխառության մասնակցումն այն չափով, վոր սահմանում է ռայոնական գործադիր կոմիտեն, բայց վոչ պակաս քան 50% փոխառության ընդհանուր գումարից.

ժը) գյուղական խորհուրդների կենցաղային և կուլտ-կրթական հիմնարկների և կոլտնտեսությունների կողմից կազմած հասարակական ֆոնդեր կազմակերպելու և պահելու համար արած մասնահանումներ այն չափով, վոր նախատեսվում է այս ֆոնդերի ծախսման պլանով և ընդունված է կոլտնտեսների ընդհանուր ժողովի և հաստատված է գյուղական խորհրդի կողմից.

ժթ) նպատակային միջոցները, վոր տրվում են գյուղական բյուջեյին կոլտնտեսությունների վորոշումով.

17 MAY 2013

27.273

ի) 100% միանվագ հարկ մենատնտեսներից՝ հարկի այն մասը, որը տրվում է գյուղական բյուջեին.

իա) փոխառությունները, որը կնքում են գյուղական խորհուրդները այն սահմաններում, որը նախատեսված է տեղական խորհրդի սատցվածքային իրավունքների մասին գործող օրենքով։

7. Փաստային յեկամուտների ամեն մի ավելացումը գյուղական բյուջեյով հաշվարկածի դիմաց մտնում է գյուղական բյուջեն համապատասխան բաժիններով, որը սահմանված են սույն Կանոնադրությունով յեկամուտների առանձին աղբյուրների համար և ծախսվում է լրացուցիչ նախահաշվով։

Լրացուցիչ նախահաշվի կազմելը թույլ է տրվում այն դեպքում, յերբ գյուղական բյուջեյի կատարման նախնական հաշվետվության տվյալների հիման վրա բյուջետային տարվա առաջին կիսամյակում պարզվում է, որ այս բյուջեյի յեկամտային մասի կատարումը այս կամ այն հոդվածով թերագանձումը ծածկելուց հետո, յեկամուտները իսկապես ավելի կլինեն, քան նախահաշվային յենթադրությունները։

8. Յեկամուտները և ծախքերը գյուղական խորհրդի համար և նպատակների չափը կարգավորման ֆոնդից ռայոնական գործադիր կոմիտեյի կողմից վորոշելուց հետո գյուղական բյուջեները, կիրառելով հետևյալ պահանջները, գյուղական խորհուրդները կազմում են առաջիկա տարվա գյուղական բյուջեների յելքի մասը։ Ծախքերը մտցվում են նրանց կարևորության կարգով, առաջին հերթի կարևորություն չներկայացնող ծախքերը մտնում են բյուջեյի մեջ միայն, յերբ գոյություն ունի առաջին հերթի կարիքները ծածկելուց հետո, դրամական միջոցների ազատ մնացորդ այն պայմանով, որը բոլոր նախահաշվային ծախքերի հատկացումների միահամրությունը ծածկվի գյուղական խորհրդին վերապահված յեկամտային աղբյուրներով։

9. Գյուղական բյուջեն մտնող բոլոր գումարները՝ թե յեկամուտները և թե ծախքերը պետք է հաստատվեն բացատրություններով կամ տվյալներով, որոնք հիմք են ծառայել նրանց բյուջե մտցնելու համար, նաև մանրամասն հաշիվներով, որոնք հաստատում են թվարկած գումարների չափը։

10. Կազմած և գյուղական խորհրդի հավանությունը գտած գյուղական բյուջեները վոչ ուշ քան մի ամիս բյուջետային տարվա սկզբից առաջ ներկայացվում են համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեյին, որը համապատասխան փոփոխություններ և հաստատություններ մտցնելուց հետո, վերադարձնում է գյուղական խորհրդի բյուջետային տարվա սկզբից 10 որ առաջ, որից հետո բյուջեն ի կատար է ածվում։ Այն դեպքում, յերբ ռայոնական գործադիր կոմիտեն չի վերադարձնում գյուղական խորհրդին հաստատած բյուջեն, գյուղական բյուջեն ի կատար է ածվում առանց փոփոխությունների։

11. Հաստատած բյուջեյի սահմաններում, գյուղական ֆինանսական գործավորները կազմում են բյուջեների կատար ածման յուրաքանչյուր

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ZUUՌ-Apm CCP
Ա. ԽԱ Ա
USUU

58919-67

յերեք ամսվա պլան, յեկամուտների յեկույթների ժամկետներին և ծախքերի կատարման սեզոնականության և պայմանաժամության համաձայն։ Այս պլանները հաստատում է գյուղական խորհրդի նախագահությունը՝ գյուղական խորհրդի ակտիվի մասնակցությամբ։ Ծախքերի սահմաններում յեռամսյա դրամարկղային պլանների համաձայն կազմում են յուրաքանչյուր ամսվա ծախքացուցակ, որը հաստատվում է նույն կարգով։

12. Գյուղական բյուջեյի կարգադրիչն է գյուղական խորհուրդը, սակայն գյուղական խորհրդի վորոշումով գյուղական բյուջեյով պահվող հիմնարկություններին կարելի յե վերապահել վարկերի յերեքքաստիճանային կարգադրիչի իրավունք։

13. Բաց արած վարկերը ողտագործվում են ասիգնանքներով իր հատկացման առարկայի կարգով։ Ասիգնանքներ տալը կարգադրիչի կողմից և նրանց վճարումը, յերբ համապատասխան վարկ չկա կամ այնպիսի գումարների, որոնք անցնում են բաց արած վարկի սահմաններից, նաև այն նպատակների համար, որը չի համապատասխանում տվյալ նախահաշվային յենթարաժանման հատկացման, չի թույլատրվում։ Ասիգնանքով ստացած գումարները կարող են ծախսվել միայն բյուջեյով նախատեսած նպատակների համար այն նախահաշվային յենթարաժնման համաձայն, որով դուրս է գրված ասիգնանքը։

14. Բացառիկ դեպքերում թույլ է տրվում վարկերի տեղափոխություն նույն հատվածի սահմաններում, գյուղական խորհրդի հատուկ, յուրաքանչյուր առանձին դեպքում, գյուղական խորհրդի վորոշումով։

15. Վարկերի տեղափոխությունը մի հատվածից մյուս հատվածը թույլատրվում է ռայոնական գործադիր կոմիտեյի հատուկ թույլտվությամբ։

Այլ հոդվածներից վարկերի տեղափոխությունը աշխատավարձի, գործուղման և վարչական ծախքերի հոդվածները անպայման արգելվում է, նաև չի թույլատրվում վարկերի տեղափոխությունը աշխատավարձի հոդվածից մի վորևե ուրիշ հոդված բացի այն դեպքերից, յերբ հայտարերվում է աշխատավարձի տնտեսություն։

16. Գյուղական բյուջեների դրամարկղային սպասարկումը հանձնվում է Պետբանկի հիմնարկություններին, այն վայրերում, վորտեղ չկան նման հիմնարկներ՝ պետական աշխատանքային խնայողական գանձարկղներին։

Գյուղական բյուջեյի յեկամուտները կազմող բոլոր դրամական գումարները, որոնք ուղարկվում և մտցվում են գյուղական խորհրդի կարգադրության, մտնում են Պետական բանկի այն հիմնարկի կամ պետական աշխատանքային այն խնայողական գանձարկղի ընթացիկ հաշվի մեջ, որին հանձնված է գյուղական խորհրդի դրամարկղային կատարումը։

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ գյուղական խորհրդի գտնված վայրերում չկա պետական աշխատանքային խնայողական

գանձարկղ, գյուղական բյուջեների գրամարկղային սպասարկումը իրագործում և համապատասխան գյուղական խորհուրդը։

17. Բոլոր տեղական հարկերը, վոչ-հարկային յեկամուտները և ամեն տեսակ այլ գումարները, վորոնք պետք է հաշվանցվեն գյուղական բյուջեյի յեկամտի մեջ, չեն կարող ծախսվել նույնիսկ բյուջեյով նախատեսված կարիքների համար, այլ պետք է լիովին մտցվեն Պետական բանկի համապատասխան հիմնարկները կամ համապատասխան խնայողական գանձարկղները, վորտեղից բոլոր գյուղական բյուջեյով պահվող մարմինները, հիմնարկությունները և ձեռնարկությունները ստանում են սույն Կանոնադրության 13-րդ հոդվածի կարգով միջոցներ՝ իրենց կարիքները բավարարելու համար բյուջեյի բաց արած վարկերի սահմաններում։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZSSR-Арм ССР
Գ. Հմ. Մաշտոցի անվան

გამომცემელი: საქ. სსრ ხ. კ. ხ-ოს საქმეთა მმართველობა 1934 № 14

ქაღალდის ფორმატი 62×94 სანტ.; 3/8 ბეჭდვ. ფურც.; 1 ბეჭდვ. ფურც. 47.000 სტამბ. ნიშანი.
გადაეცა სტამბას 21/III; ხელმოწერილია დასაბეჭდად 23/IV; ტირაჟი 150.

მთავლ. № 446. „ტექნიკა და შრომა"-ს გამომცემლობის სტამბა. ტფილისი. შეკვ. № 563.

«Ազգային գրադարան»
NL0197965

627
34-1
Са 848
Библиотека
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР